<<Էդիտ Պրինտ>> հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ <<Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում>>

Հաստատություն՝ <<Կապանի թիվ 1 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Նարինե Թումանյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Оглавление

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ 4
1.1 Ամանոր 5
1.2 Տյառնընդառաջ 6
1.3 Բարեկենդան 7
1.4 Ծառզարդ 9
1.5 Սուրբ Զատիկ 11
1.6 Համբարձման տոն 13
1.7 Պայծառակերպության տոն 14
ԳԼՈՒԽ 2. ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 15
2.1 Ծիսական խաղերի իրականացում 16
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 18
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքս կրում է <<Ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում>> վերնագիրը: Արդի հասարակության համար կարևոր խնդիրներից է բարոյական ազգային նորմերի ճիշտ արժևորումը և նոր սերունդների դաստիարակության գործում դրանց կիրառումը: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ազգային տոներն ու ծեսերը, դրանց կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում: Յուրաքանչյուր ոք ով մուտք է գործում կրթական միջավայր, ունի առաքելություն՝ այն է կրթելու և դաստիարակելու հայրենիքին արժանի բարոյական, ազգային և ավանդական արժեքները բարձր պահող անհատներ: Յուրաքանչյուր անձի, երեխայի մեջ պետք է սերմանել սեր հայրենիքի և ազգի նկատմամբ, իսկ ժամանակի ընթացքում այդ սերը պետք է մեծացնել և ավելացնել: Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձահատկությունները, դրանց օգտակարությունը ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում: Մեր երկրում երեխաների մեջ ազգային արժեքների ձևավորմանը ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում, և որպես բովանդակային բաղադրիչ, հաշվի առնելով երեխաների կարողունակությունները՝ պետք է ունենալ համապատասխան վերջնարդյունքներ: Ազգային արժեքները կարևոր նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում: Անձի բազմակողմանի ձևավորման և ցարգացման համար կարևոր է նրա արժեհամակարգում բարոյական, գեղագիտական, հոգևոր, մշակութային արժեքների ընկալումը: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ազգային, մշակութային, ընտանեական, կրթական և այլն: Հաշվի առնելով այս բազմաթիվ հանգամանքները՝ մանկավարժության համար խնդիր է դառնում երեխապերի ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակութային հենքի վրա: Մանկավարժի առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումը սերմանելն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից: Ազգային արժեքները մեր ազգային տոներն ու ծեսերն են:

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ

Կրթական համակարգի հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից է սկսվում մանկան աշխարհճանաչմանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Այստեղ է ձևավորվում նրա վերաբերմունքը աշխարհի, մարդկանց, շրջապատի նկատմամբ: Այստեղ է, որ նրա մեջ սերմանվել են մարդուն այսօր այնքան անհրաժեշտ բարության առաջին հատիկները: Մենք մանկավարժներս պարտավոր ենք ըստ արժանավույն կատարել մեզ վստահված գործը, մանուկներին դաստիարակել հայեցի և քրիստոնեաբար: Մշակույթը չէր պահպանվի եթե գոյություն չունենար սերնդեսերունդ փոխանցման միջոցները: Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը և ազգային տոները: Մենք պետք է ուժ առնենք մեր ազգային արժեքներից՝ նրանցից վերցնենք լավագույնը ու ուղենիշները: Երեխաների գեղագիտական և քրիստոնեական դաստիարակության գործում անգնահատելի նշանակություն ունեն ընտանեական, ժողովրդական ազգային հանդիսությունների մանկականացված միջոցառումները: Ազգային արժեք են նաև ծեսերը: Եթե սերնդեսերունդ չփոխանցվեր, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներ, պատմության ընթացքում ձևավորված ծեսերը չէր պահպանվի: Ծեսն իրենից ներկայացնում է ավանդական կրոնական արարողություն: Հայոց եկեղեցում ծեսերը հաստատել, սահմանել և կարգավորել են կաթողիկոսները՝ համաձայն Աստվածաշնչյան մեկնությունների: Այս գործում ներդրում են ունեցել Գրիգոր Լուսավորիչը և Ներսես կաթողիկոսը: Հայկական մշակույթը հնուց ի վեր մինչ օրս էլ աչքի է ընկնում իր բազմաթիվ ու յուրօրինակ ազգային տոներով:Ժողովրդի մեջ տոները նշելու ձգտումը շատ մեծ է, և տոնը ոչ թե հայտարարված տոնական օր է, այլ՝ այդ օրվա բովանդակությանը և ժողովրդի մշակութային նորմերին համապատասխան տոնա ծիսական արարողակարգ: Այդ տոներից են Նոր Տարին, Սուրբ Ծնունդը, Տյառնընդառաջը, Բարեկենդանը, Ծաղկազարդը, Համբարձումը, Վարդավառը: Մարդիկ այնքան էին հավատում ծեսերի զորությանը, որ հնարել էին անձրևաբեր և անձրևախափան ծեսերը՝ որպեսզի կարողանային ծեսերի միջոցով կարգավորել բնության երևույթները: Ծեսերը աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Ծեսերի շնորհիվ պահպանվել և սերնդեսերունդ են փոխանցվել ազգային կյանքի բոլոր առանձնահատկությունները: Ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել առօրյա կյանքի և կենցաղի վրա: Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանակալի են, խորհրդանշական: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը: Ծեսերը աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Ծեսերը անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով

ավանդույթի ընդհանուր կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական մի ամբողջություն: Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս, որպես ստեղծագործ, որպես գործիչ, որպես քննադատ Ա. Կ. Գեղամյան, <<Ծեսը, ծիսակարգը և սովորույթը որպես մշակույթի ժառանգման մեխանիզմներ>>: Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրող և ակտիվ փոխանցող: Այն ծեսերը և տոները, որ հայ ժողովուրդը նշում էր դեռևս 100 տարի առաջ, շատ քիչ են պահպանվել կենցաղում: Հայաստանի Հանրապետության առանձին մարզերում շարունակում են նշել Վարդավառը, որոշ տեղերում (մասնավորապես Գեղարքունիքի մարզ), մասամբ նշում են Համբարձումը, իսկ Զատիկը և Տյառնընդառաջի Սուրբ Խաչի որոշ ծեսեր պահպանվել են համարյա ամենուր: Ուսումնասիրողները հայ ժողովրդի տոնացույցում բացահայտում են նրա վաղնջական շերտերը, տեսնում արևի ու կրակի, ջրի ու հողի պաշտպանմունքին նվիրված հանդիսություններ: Իրենց ծագումով դրանց զգալի մասը գալիս են մեր ժողովրդի ձևավորման շրջանից և պատմության ընթացքում ձևափոխությունների ենթարկվելով մինչև այսօր հնարավորություն են տալիս վերլուծել և թափանցել մեր մշակույթի վաղնջական շերտերը:

1.1 Ամանոր

Հունվարի 1-ին տարին սկսելու և Նոր տարվա սկզբի տոն նշելու սովորույթը հայերի մեջ ընդհանրացել է ուշ վաղ անցյալում: Տոնի անունները հայերի մեջ տարբեր էին՝ Ամանոր, Տարեմուտ, Տարին գլուխ, Նոր Տարի, Կաղանդ, Կաղինդ: Նոր տարվան նախորդող գիշերն էլ հայտնի էր Լոլեի գիշեր, Իզվիլիկ, Գուրեկախ անուններով: Նոր տարվա նախապատրաստությունները ուտելիքների շուրջն էին: Նոր տարվա տոնական խնջույքն սկսվում էր դեկտեմբերի 31-ի ընթրիքով: Շատ տեղերում այդ օրը այցելություններ չէին

լինում, սակայն այդ օրը ընտանիքի բոլոր անդամների ներկայությունը պարտադիր էր: Մանկապարտեզում Ամանորյա տոնակատարությունը հատուկ տեղ է գրավում տոների շարքում: Այն երեխաների ամենասիրված տոներից մեկն է: Ամանորի նախաշեմին երեխաները պատրաստում են թեմատիկ զարդարանքներ, բացիկներ, որոնցով զարդարում ենք դահլիճը: Պատրաստում են բամբակյա ձնագնդիկներ, որոնցով էլ խաղում են միջոցառման շրջանակներում:

1.2 Տյառնընդառաջ

Հայ Առաքելական Եկեղեցին Տյառնընդառաջը տոնում է փետրվարի 14-ին, Քրիստոսի ծննդից՝ հունվարի 6-ից քառասուն օր հետո: Այն անշարժ տոն է: Տոնի պաշտոնական՝ Տյառնընդառաջ անունը բացատրվում է Քրիստոսի կենսագրության այն իրողությամբ, որ Հրեական օրենքի համաձայն՝ Փրկչի ծննդյան քառասուներրորդ օրը նրա ծնողները՝ Մարիամն ու Հովսեփը, որդուն տաճար տարան: Այստեղ վրան ընդառաջ եկավ խոր ծերության հասած գալստյանն սպասող Սիմոն ծերունին, որտեղից և տոնի անունը՝ Տյառնընդառաջ, տիրոջն ընդառաջ: Տյառնընդառաջին վառվող խարույկը գարնան ավետման խորհորդն ունի: Տարածված էր այն պատկերացումը, որ Տյառնընդառաջի հոտ վերջանում էր <<ձմռան քառասունքը>>: Տոնական հանդիսությունները, սակայն ունեն հնագույն ավանդույթներ և առչվում են կրակի պաշտպանմունքը: Կրակը խորհրդանիշն էր արևի և լույսի, ինչպես նաև ջերմության: Կրակը համարվում էր նվիրական սրբություն: Ընտանեական բույնը, երդիկը կոչվում է նաև օջախ, ծուխ: Սովորաբար Տյառնընդառաջի հրավառությունը վերագրվում է Հայոց Տիր, ինչպես նաև Միհր աստծուն: Տիրը երազանքի մեկնիշն էր, իսկ Միհրը մարմանվորում էր կրակի ու լույսի ուժը: Տոնի գլխավոր նպատակն էր՝ կրակի միջոցով ազդել սառնամանիքների վրա և զորացնել արևի ջերմությունը: Արարողությունները եկեղեցում սկսվում են երեկոյան ժամերգությամբ, որից հետո արգելվում է <<լույս զվարթ>> շարականը: Փետրվարի 13-ի երեկոյան ժամերգությունից հետո տեղի է ունենում նախատոնական՝՝ բաժանում են մոմեր և եկեղեցականը վառում է սեղանի վրա դրված մոմերը: Ժամերգությունից հետո հավատացյալները վառում են իրենց մոմերը և տանում տուն: Եկեղեցական արարողությունից հետո, հինավուրց սովորության համաձայն, եկեղեցու բակում կրակ է վառվում: Հին Ջուղայում փշե դեզը եկեղեցու գավթում պարավոր էին պատրաստել նույն տարում պսակված երիտասարդները: Գերադասելի էր խարույկի համար օգտագործել հատուկ փայտ: Շատուրում էլ գերադասում էին խաղողենու դյուրավառ փայտը: Առաջինը քահանայի օրհնությունից հետո, վառում էին եկեղեցու բակի մեծ խարույկը: Կրակը վառելու պարտավոր իրավունքն այդ տարի ամուսնացած նորապսակներինն էր, եթե գյուղում նունիսկ 10 նորափես լիներ, բոլորն էլ պետք է մասնակցեին կրակը վառելու արարողությանը: Վաղարշապատում և շրջակա գյուղերում նորահարս ունեցող տունը Տրնդեզի տոնին հրավիրում էր աղջիկներին և հարսներին: Քավորը բռնում էր նորապսակ տղայի ձեռքից և երեք անգամ պտտվում դեզի շուրջ, ապա երեք անգամ թռնում էին խարույկի վրայով: Կրակի վրայով թռնելը նպատակ ուներ՝ ազատվել չլավից: Նույն տպատակով էլ վառում էին շորի մի մասը, փեշը: հավաքվածները ուշադիր հետևում էին ծխի ուղղությանը, այն ցույց էր տալիս այդ տարվա առավել բերքառատ գոտին: Քանի դեռ կրակը վառում էր, կանայք մի սկուտեղի վրա լցրած աղանձը,

չամիչը, ընկույզը, կարմրացած եգիպտացորենը, բոված սիսեռը, դդմի կորիզը և այլն բերում էին, պտտվում կրակի շուրջը, մի մասը բաժանում երեխաներին, մյուս մասը ներս տանում: Տյառնընդառաջի և Ս. Սարգսին շաղախած փոխինդ ճաշակելն ուղղակի անհրաժեշտություն էր: Մեր մանկապարտեզում նույնպես պարտադիր նշում ենք Տյառնընդառաջի տոնը: Մանկապարտեզի բակում նախորոք երեխաների հետ միասին դասավորում ենք փոքրիկ դեզը, վառում այն և շուրջը պտտվելով երգում ենք ծիսական երգեր, դաստիարակի օգնությամբ երեխաները ցատկում են կրակի վրայով և հատիկեղենը սփռում ենք շուրջը, իբրև առատության խորհրդանիշ:

1.3 Բարեկենդան

Մեր ազգային տոներից է Բարեկենդանը: Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն: Այն ուրախության ու զվարճանքի օր է, հիշեցնում է Ադամի և Եվայի դրախտային կյանքը, երբ նրանք ապրում էին վայելքի ու անհոգության մեջ: Տոնը հավանաբար կապ ունի գարնան սկսվելու հետ: Մեծ պահքի նախորդող շաբաթվա տոն, նշվում էր կերուխումով, մասսայական խաղերով, մրցումներով, թատերախաղերով, պարերով և այլն: Այն տևում էր երկու շաբաթ, անմիջականորեն հաջորդելով Ս. Սարգսին և ավարտվելով Մեծ պասով: Մեծ պահքի նախորդող կիրակին բուն բարեկենդանի օրն էր: Պահքի կարևոր լինելը մարդկանց ցույց է տվել Քրիստոսը: Նա 40 օր անցկացրել է անապատում: Մարդիկ Հիսուս Քրիստոսի օրինակով են մահում Մեծ պահքը: Մեծ պահքի 40 օրերին զումարվել է նաև Զատիկին նախորդող օրերը, և այն տևում է 49 օր: Մեծ պահքը ավարտվում է Զատիկի՝ Քրիստոսի Հարության տոնով: Բարեկենդանի անբաժան մասն էին Ուտիս տատը և Պաս պապը կամ Ակլատիզը: Ուտիս տատը համարվում էր Բարեկենդանի այսինքն՝ ճոխ կերակուրների հովանավոր տիկնիկը և մտցվում էր հրապարակ՝ մարդկանց խրախճանքի հրավիրելու: Ուտիս տատը, որը Բարեկենդանի օրերին բոլորին կերուխումի էր հրավիրում, արդեն

քրքրված տիկնիկ էր: Իսկ Բարեկենդանի վերջին օրը՝ Բուն Բարեկենդանին, Ուտիս տատին հանդիսավոր կերպով գլորում էին սարի գլխից: Ակլատիզը, որը Պահքի հովանավոր տիկնիկն էր, պատրաստում են սոխից կամ կարտոֆիլից և մեջը խրում յոթ փետուր, ապա՝ զգեստավորում: Այն տանը առաստաղից կախելից երգում էին:

Տատը գնաց շերեփը ձեռին,

Պապը եկավ չոմբախն ուսին:

Յոթ փետուրները խորհրդանշում էին Մեծ Պահքի 7 շաբաթը: Յուրաքանչյուր շաբաթվա վերջում պոկելն ուղեկցվում էր հատուկ երգով:

Ճիճու Ճիճվատանքը՝ դուրս,

Ցորեն, գարին՝ ներս:

Բարեկենդանի անբաժանելի մասն է դիմակավորումը: Մարդիկ հնարավորություն ունեին ծպտվելու և կերպարանափոխվելու: Դեմքերին դնում էին ծիծաղելի դիմակներ կամ ներկում մրով, ալյուրով ու ածուխով: Մեր մանկապարտեզում նույնպես այդ օրը սկսվում է դիմակավորված, երեխաների երգ ու պարով: Տոների հետ միասին երեխաները նախապատրաստվում էին դդմատոնին: Իսկ ղափամա պատրաստելուց առաջ մաքրեցինք դդումը կորիզներից, մեջը պատեցինք մեղրով, խառնեցինք, բրինձ, չիր ու չամիչ լցնելուց հետո ուղարկեցինք ջեռոց: Մինչ ղափամայի համտեսելը, երեխաների հետ խաղացինք դդմագլոր: Դդումներով կարելի է զվարճալի խաղեր խաղալ: Մենք խաղացինք դդմագլոր խաղը: Իրար էին գլորում դդմիկները: Իսկ ղափամայի պատրաստելուց հետո, երեխաները միասին երգեցին ղափամա ծիսական երգը:

1.4 Ծառզարդ

Հնագույն շրջանում հայ ժողովուրդն ունեցել է խնկենու, սոսու, կաղնու, չինստենու, ուռենու պաշտպանմունք՝ որպես տիեզերքի ներդաշնակության, անմահության, պտղաբերության, կենաց ծառի խորհրդանիշ: Մեր նախնիները Ատիս աստվածուհու տոնին նվիրված օրը, առավոտյան վաղ, արևից առաջ գնում էին սրբազան անտառ և ծիսակատարությամբ ծառից պոկում մի ճյուղ: Ծառը զարդարում էին շորի պատառիկներով, պտուղներով:

Ծառազարդ, ծառին զարգատ,

Խունկ առեք, խունկ ծխեցեք,

Սև հավեն հավկիթ գուզեմ,

Կարմիր կովեն եղ գազեմ,

Վեվ օր տա՝ շեկ մնա,

Վեվ օր չտա՝ չոր չորանա:

Եղել է տոն, որը ժողովուրդն անվանել է Ծառազարդ: Զատիկից մեկ շաբաթ առաջ Հիսուսը, ավանակի վրա նստած, իր աշակերտների հետ մտավ Երուսաղեմ: Ժողովուրդը նրան ցնցությամբ դիմավորեց: Մարդիկ իրենց զգեստներն ու արմավենու ճյուղեր էին փռում Հիսուսի ոտքերի տակ և գոչում:

Օրհնությու՛ն Դավթի Որդուն, օրհնյա՛լ է նա, ով գալիս է Տիրոջ անունով:

Ծաղկազարդը (Ծառազարդ) Մեծ Պասի նախավերջին կիրակնօրյա տոնն է: Այդ օրը եկեղեցիներում Ս. Պատարագ է մատուցվում, մարդիկ ուռենու բողբոջած ճյուղերն օրհնել են տալիս հոգևորականներին և տանում իրենց տուն: Ինչպես Պաղեստինում ձիթենիներն ու արմավենիները, այդպես էլ Հայաստանում բողբոջում են ուռենիները, բարդիները: Ուռենու ճյուղերն օրհնել են տալիս հոգևորականներին և տանում իրենց տուն: Ուռենու ճյուղերը խորհրդանշում են այն արմավենու ճյուղերը, որոնք հրեաները փռում էին Հիսուսի ոտքերի տակ, երբ նա մտնում էր Երուսաղեմ նորապսակ երիտասարդները, նշանված տղաները շաբաթ լույս կիրակի կեսգիշերին, արմատախիլ էին անում նոր բողբոջած ուռենիները, ճյուղերը զարդարում գույնզգույն շաթի կտորներով, թելի վրա շարված ղամշահատիկներով, մրգերով, եռասայր մոմերով: Նրանք եկեղեցի էին շտապում: Առաջին տեղ հասնողը խփում է զանգը, մյուսները գնում էին քահանային արթնացնելու: Ողջ եկեղեցին զարդարում էին ուռենու բողբոջած ճյուղերով, մի մեծ կույտ, ճյուղերն էլ դարսում էին կենտրոնում: Եկեղեցու մուտքը ամբողջովին հավաքում էին ծաղկե շրջանակով: Նշված տղաները զարդարված

ծառերով կանգնում էին իրենց հարսնացուների առաջ: Մերձավոր կանանցից մեկը ծառի վրա եռասայր մոմ էր վառում ու ընծաներ տալիս:

Ծառազարդար, ծառազարդար, ձեր տուն էկանք ծառազարդար:

Այս խոսքից հետո մարդիկ հերթով բարեմաղթանքներ են իրար ասում, մանկական զգուշացնող հղումներ են անում:

Օրինակ՝

-Ով մեր փայը տա՝ զիզի բարձին նստի:

-Ով էլ չտա՝ չոր քարին նստի:

-Ով մեր փայը տա՝ դալարի շեն մնա:

-Ով էլ չտա՝ ալարի, մուկն էլ իրենց թթուն մտնի:

Ձարդ, զարդ, ծաղկազարդ, գարնան գովք ու զարդ, ծաղկազարդ ու ծառազարդ:

1.5 Սուրբ Զատիկ

Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությունը եկեղեցու գլխավոր տոներից է: Աստծո որդին իր արյունը հեղեց աշխարհի մեղավոր մարդկանց փրկության համար, խաչվեց, թաղվեց և երրորդ օրը հարություն առավ: Հայոց տոների շարքում Զատիկը բնության զարթոնքը խորհրդանշող ամենամեծ ու ամենասպասված 1 տոնն է: Այն շարժվում է 35 օրերի միջև՝ մարտի 22-ից մինչև ապրիլի 25-ը: Զատվել բառը այստեղ խորհրդանշում է ոչ միայն տարվա եղանակների զատումը, այլ նաև բնության գույների զատումը, բաժանումն ու տարբերակումը համընդհանուև գորշությունից, միապաղաղությունից: Հարություն առած բնությունը զարդարվում է կանաչով, ծառ ու ծաղկով, հողը ծածկվում է գույներով, ծաղկում են ծիրանենիները, խնձորենիները, տանձենիները, դեղձենիները…

Զատիկ բառի մյուս մեկնաբանությունը ազատվել իմաստն ունի: Բացի վերոհիշյալ խորհրդից, այսինքն՝ ձմռան երկար թագավորությունից բնության ազատվելուց, հավանաբար այն նշանակել է նաև Մեծ Պասը ավարտելու, դրա խստություններից ազատվելու իմաստը, երբ մարդիկ քառասունօրյա պասով մաքրագործելով հոգին ու մարմինը, վերջապես իրավունք են ստանում օգտվելու երկար սպասված, կենդանական ծագում ունեցող կերակուրներից: Զատկական ձուն <<Օրինակ է բոլոր աշխարհի, և ինչպես, որ իմաստունիներն են ասում՝ դրսի կեղևն նմանում է երկնքին, մզղաձև՝ օդին և սպիտակուցը՝ ջին, դեղինն էլ երկրին է, այսինքն՝ մեջը (թորգոմ վարդապետ): Գրիգոր Տաթևացին էլ նման միտք է արտահայտել ձուն կարմիր ներկելու մասին: Միայն Զատիկին ենք ձուն կարմիր ներկում, որովհետև ձուն օրինակ է աշխարհի և ինչպես իմաստունիներն են ասում դրսի կեղևը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկրին: Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է, որ աշխարհը գնվեց Քրիստոսի արյամբ: Եվ մենք կարմի ձուն մեր ձեռքերի մեջ առնելով, հոշակում ենք մեր փրկությունը: Ուշագրավ է, որ ձուն համարվում է կենաց ծառի կյանքի խորհրդանիշ: Զատիկը առավոտյան մատուցվում է Ս. Պատարագից հետո տնետուն անցնելով Մրդիկ իրար հայտնում են Ս.Հարություն ոտախաբեր ավետիսը ասելով.

Քրիստոս հարյավ ի մեռելոց:

Օրհնյալ է հարությունը Քրիստոսի:

Զատիկին ներկվող, թելերով, փնջվող, ուլունքազարդ, նկարազարդվող և այլն ձևերով զարդարվող ձվերը, հիանալի ժողովրդական ստեղծագործության, անսպառ երևակայության դրսևորման չափազուն ձևերից է: Զատիկին էին կատարում տարվա ամենասպասված մատաղները: Մեծ ոգևորությամբ ենք նշում Զատիկի տոնը: Տոնի նախաշեմին երեխաները

պատրաստում են զանազան զարդարանքներ: Այդ գունագեղ գեղեցիկ ձևերով զարդարում ենք դահլիճում դրված ճյուղերը: Նախօրոք դաստիարակի օգնությամբ բամբակի վրա ցանում են ցորեն, գարի, որը զատիկի խորհրդանիշներից է: Զատիկի օրը դահլիճը համապատասխան ձևավորվում է: Սեղաններին դնում են Սուրբ Զատիկի տոնին նվիրված ուտելիքներ՝ ներկված ձվեր, չամչով փլավ և այլն:

Տոնին նվիրված ասույթներ են իրար ասում.

Կարմիր ձուն Զատիկին կսազե:
Զատիկն ասելա՝ հենց գամ, արմանաս, հենց գնամ, զարմանաս:

Զատիկե Զատիկ է, նավահատիկ է չամչե հատիկ է:
Հավը կուտե հատիկ, հատիկ ծով ձմեռեն կելնե Զատիկ:

Կարմիր ձու տուր, կարմիր օր տամ:
Զատիկից հետո կարմիր հավկիթ:

Սովորել են նաև Զատիկի օրերի տոնացույցը.

Հուշիկ, հուշիկ երկուշաբթի
Երեքշաբթի՝ քարքաշիկ.
Չիք չորեքշաբթի
Ավագ հինգշաբթի
Հուդայի ուրբաթ,
Ախարի կիրակի:
Երկուշաբթի մեռելոց,
Կանաչ-կարմիր կիրակի:

1.6 Համբարձման տոն

Հարություն առնելուց հետո Հիսուսը 40օր երևաց աշակերտներին, խոսեց Աստծո արքայության մասին: Քառասուներրորդ օրը նրանց հետ Ձիթենյանց լեռը բարձրացավ, վերջին պատգամները տվեց սիրելի աշակերտներին, ապա ձեռքերը դեպի երկինք տարածեց, օրհնեց նրանց և լեռան գագաթից սկսեց համբառնալ երկինք: Ծուտով մի լուսավոր ամպ իջավ և ծածկեց նրան առաքյալների տեսողությունից: Համբարձման տոնը կատարվում է Հարության կիրակիից՝ Զատիկից քառասուն օր անց և պայմանավորված լինելով Զատիկով բնականաբար, այն շարժական է և ամեն տարի տարբեր օրեր է նշվում: Սակայն այն միշտ տոնվում է հինգշաբթի: Առնելով մարդկային մեր բնությունը՝ Քրիստոսն իր գալուստով մաքրեց ու օրհնեց մարդկանց: Մկրտվելով ջրում և թաղվելով գերեզմանում՝ մաքրեց հողն ու ջուրը, իսկ հարությունից հետո՝ օդն ու կրակը: Նա մարդկային բնությունը միավորեց Աստծո խոսքին: Եթե Զատկի տոնին առանձնանում, զատվում են բնության գույները, ավարտվում ցանքի աշխատանքներից, ապա Համբարձմանն ակնկալվում է ցանված բերքի աճն ու փթթումը: Այդ նպատակով ժողովուրդը դուրս է գալիս դաշտերը և ևրգ-պարով, ուրախություններով սիրաշահում մայր բնությունը: Համբարձումը բնության բեղունության ու արբունքի, բուսականության աճի տոն է: Այն համընկնում է գարնանային աշխատանքների ավարտի հետ, այսինքն՝ այն պահի երբ երկրագործն, իրենից կախված ամեն ինչ անելուց հետո, հայացի վեր է պարզում և Աստծուց ու բնությունից ակնկալում հատուցում: Տոնի մյուս կարևոր խորհուրդը. այդ օրն արգելվում է արյուն հեղեղել՝ կենդանու զոհ մատուցել:

1.7 Պայծառակերպության տոն

Զատիկի հաջորդող 14-րդ կիրակի օրը մեր եկեղեցին տոնում է Պայծառակերպության տոնը, որը ժողովրդի մեջ հայտնի է Վարդավառ անվամբ: Այդ օրը Հիսուսը Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի հետ բարձրացավ Թաբոր լեռը՝ աղոթելու: Աղոթքի պահին Աստվածորդու դեմքը փայլեց՝ ինչպես արեգակ, զգեստները շողատարակեցին՝ ինչպես լույսը: Հանկարծ առաքյալներին երևացին Մովսես և Եղիա մարգարեները, ովքեր խոսում էին Հիսուսի հետ: Մի լուսավոր ամպ նրանց վրա հովանի եղավ, և ամպից լսվեց մի ձայն, որ ասում էր. <<Դա է իմ սիրելի Որդին, դրան լսեք: Եկեղեցական մեկնաբանությամբ Քրիստոսնէ նմանեցվում վարդի ու եթե մինչ ի յալակերպություն որպես թե վարդ ի կոկոնի էր, և յայլակերպին՝ ի թաբոր՝ իբր թե վարդ վառեցավ>> (Տ. Թորգոմ պատրիաք): Ավանդույթը պայծառակերպության վայր է համարում Թաբոր լեռը, որի վրա էլ հետագայում կառուցվել է եկեղեցի ի հիշատակ Տիրոջ պայծառակերպության: Վարդավառ բառը տարբեր իմաստներով է ստուգաբանվում, որոնք բոլորն էլ բնութագրում են տոնը, ինչպես նաև՝ մատնանշում դրա խորհուրդները: Մի տարբերակով <<Վարդավառ բառը կազմված է վարդ (ուարդ)-ջուր և վառ-սրսկել, լվանալ արմատներց, նշանակում է ջրցանություն, որը կազմում է տոնական արարողակարգի գլխավոր մասը: Եվ իրոք, հուլիսի, երբ արևը հասնում է իր կիզակետին, հրավառվում, չորանում է բնությունը, մարդիկ զանգվածաբար ջրցանություն են կատարում և աստվածներից ջուր խնդրում: Մինչև եկեղեցում երգում էին <<Խորհուրդ խորին>>, Սուրբ, սուրբ>>, Մարմին տերունականները դրսում երիտասարդները աղավնի էին թռցնում: Դա ըստ երևույթին կապված էր Նոյան աղավնու և Անահիտ աստվածուհու տոների հետ: Հանդիսականների հիացական բացականչությունների ներքո աղավնիները ցույց էին տալիս իրենց տների աղավնի վարժեցնելու հմտությունն ու սեփական վարպետությունը: Եթե աղավնին երեք անգամ պտտվում էր սիրած աղջկա տակ կտուրին, նույն աշնանը հարսնության էին տանում նրան: Առավոտյան ժամերգությունից հետո, ամեն մի ընտանիք մատաղ էր անում: Զոհաբերում էին գառ, ուլ, փոքրիկ հորթ, իսկ չունևորներից՝ աքլոր կամ հավ, որը դարձյալ բնությանը սիրաշահելու միտում ուներ:

ԳԼՈՒԽ 2. ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

-Նախադպրոցական տարիքի երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրողը ու ակտիվ փոխանցողը: Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացումը ծեսերի, տոների իրագործման ընթացքում տեղի է ունենում բնական, հաղորդակցական միջավայրում և մթնոլորտում: Ծեսի կազմակերպման ընթացքում երեխան խոսում և շփվում է հասակակիցների և մեծահասակների հետ, և սխալ կլինի մտածել թե երեխայի խոսքը կարելի է զարգացնել միայն խոսքի զարգացման հատուկ պարապմունքների ժամանակ, կամ երբ հատուկ ուշադրություն ենք դարձնում նրա խոսքին: Նախադպրոցական կրթության մեջ ծեսերի կարևորության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ երեխայի անձի զարգացման բոլոր ոլորտները զուգահեռ զարգանում են ծեսին նախապատրաստվելու և այն իրագործելու գործունեության ընթացքում: Երեխաները ծեսի կազմակերպման ընթացքում շփվում և հաղորդակցվում են: Նրանք յուրովի նախագծում են իրենց անելիքը, քննարկում ընկերների հետ: Ծեսի կազմակերպման ընթացքում դաստիարակը ծեսի ու գործողությունների մասին անհրաժեշտ տեղեկություն է հաղորդում: Երեխաները պատմում են իրենց իմացածը և դրան ավելացնում նորը: Երեխան իր գործունեության բոլոր տեակների զուգահեռ խոսում է, պատմում է, թե ինչ է անում, կարծիք հայտնում, նկարագրում, պատասխանում հարցերի: Այս ամենը խոսքի զարգացման պարապմունքներից ոչ պակաս նպաստում է երեխայի խոսքային կարողությունների զարգացմանը: Այս գործողությունների մեջ երեխան ավելի շատ սովորում է լսածը գործողության վերածելով, քան մենակ լսելով: Ծեսերի և տոների իրագործումը երեխաների մասնակցությամբ շատ արդյունավետ միջոց է այդ ամենին հասնելու համար, քանի որ ծեսերի կազմակերպումը ամբողջությամբ խաղ է և գործողությունների շարան: Ներկայացնենք, թե ծիսական գործողությունները ինչպես են ազդում երեխայի խոսքի, ինչպես նաև խոսքին նպաստող մյուս ոլորտների՝ սոցիալական, հուզական, մտավոր, զարգացման վրա: Երեխային ծեսերի նախապատրաստական աշխատանքների մեջ ներգրավելը շատ կարևոր է: Աշխատանքները հիմնականում ծիսական պարագաների պատրաստումն է: Երեխաները հնարավորություն են ունենում նկարելու, ներկելու, կտրելու և տարբեր նյութերից ծիսական պարագաններ պատրաստելու: Պատրաստվելու ժամանակ նրանց մեջ շարժվում է երևակայությունը, որով հորինում են, պատմում են այսինքն այն ինչ իրենց հոգուն ու միջավայրին է հարազատ: Եվ այս ամենի շնորհիվ շատ մեծ ազդեցություն է թողնում երեխայի խոսքի նպաստող՝ սոցիալական հուզական և մտավոր զարգացման վրա:

2.1 Ծիսական խաղերի իրականացում

Ինչպես գիտենք խաղը երեխայի խոսքի զարգացման ամենակարևոր միջոցն է: Ծեսերի ամբողջական իրականացումը ինքնին կարելի է համարել խաղ, մենք ունենք պարզ ու գեղեցիկ ծիսական խաղեր, որոնց իրականացման միջոցով կարելի է ունենալ արդյունք երեխայի զարգացման հարցում: Ծեսը այն միջավայրն է, որտեղ եևեխան հնարավորություն ունի խաղալ ազատ, ունենալ դերային խաղեր: Ազատ խաղերը երեխաներին տալիս է ինքնադրսևորվելու հնարավորություն: Ծեսի ընթացքում դերային խաղը օգնում է երեխային յուրացնել ծանոթ ու անծանոթ երևույթները, հասկանալ դրանց նշանակությունը և իրենց վրա որոշակի պատասխանատվություն վերցնել, զարգացնել ունեցած հմտությունները: Ինչպես նշեցինք ծեսի իրագործումը ինքնին խաղ է: Ծիսական երգն ու երաժշտությունը մեծ ազդեցություն է գործում երեխայի զարգացման հետևյալ ասպեկտների վրա՝ լեզվական, զգացմունքայիին, սոցիալական: Մարդաբան Մ. Դուգլեսը ծեսը սահմանում է որպես գործողությունների տիպեր, որոնք ծառայում են հավատքի արտահայտման համար, կամ էլ որոշակի խորհրդանշական համակարգերին պքտկանելու ձևեր: <<Ծես>> հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Հայկական ծեսերը շատ հարուստ երգեր ու պարեր ունեն: Երգերի բովանդակությունը միշտ համապատասխանում է տվյալ ծեսի իմաստին, իսկ բնորոշ ուտելիքները, խնջույքները, հագուստները ունեն իրենց առանձնահատկությունները: Դրանք բոլոր տոներում առկա են: Ոչ մեկն ինքնանպատակ չէ: Ծիսական երաժշտությունը կարող է զարգացնել երեխայի լեզվական կարողությունները: Մեղեդին հոկում է հիշողությունը, երեխան հիշելով երգի բառերը, զարգացնում է բառապաշարը: Այստեղ էլ երեխաները կարող են ցանկանալ հորինել իրենց սեփական երգերը՝ ծանոթ կամ անծանոթ մեղեդիների օգտագործմամբ արտահայտելով իրենց անհատական զգացողությունները: Ազգային ծեսերից շատերը կազմակերպվում են բացօդյա միջավայրում, որը առնչվում է բնության հետ (Ծաղկազարդ, Համբարձում և այլն): Բացօդյա միջավայրի հետ շփվելու ընթացքում զարգանում է երեխայի խոսքային, մտավոր ոլորտները: Բացօդյա միջավայրը հզոր միջոց է գեղեցիկը ընկալելու: Նախադպրոցականի գործունեության հիմնական ձևերը իրականացվում են խաղի միջոցով: Այն զարգացնում է երեխայի

- ուշադրությունը
- հիշողությունը
- շարժողականությունը
- հաղորդակցման կարողությունը

- ստեղծագործելու կարողությունը
- երևակայությունը

Այսպիսով երեխաները ծիսական միջավայրում պատկերացում են կազմում մարդու և բնության միջև եղած սերտ կապը: Հարստանում է իրենց բառապաշարը նոր բառերով: Ծիսական երգերի, խաղերի միջոցով երեխաներն ինքնինստիքյան մոտենում են հայ մշակույթի արմատներին: Այսօրվա թեմատիկ միջոցառումների կողքին իրենց տեղն են զբաղեցնում ազգային տոներն ու միջոցառումները՝ Բարեկենդանը, Զատիկը, Տյառնընդառաջը: Ազգային զարդանախշերով շունչ առած դահլիճը երեխաների զգեստափոխված տարազային ոճով նրանք կապվում են իրենց նախնիների հետ: Եվ տոները վերածվում են գեղեցիկ, ուրախ երգ ու պարով հագեցվածությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով հետազոտության արդյունքում եկանք մի շարք եզրահանգումների, ուսումնասիրության և վերլուծության, ծեսերի և ազգային տոների ուսումնասիրման: Առանձնահատկությունները այն միասնական գործողություններն են, որոնք համախմբում են մարդկանց գաղափարները, միասնական գործողությունները: Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի հայ ժողովրդի և հայ մշակույթը սերնդեսերուն փոխանցելու, պահպանելու համար: Ազգային ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը ազգի մշակույթը յուրացրած, ինքնադրսևորվելու, որոնելու, ստեղծագործելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Ամեն տարիք իր չափով է ներառվում այդ գործընթացին և միասին ստեղծում, իրականացնում իրենց ծեսը: Նախադպրոցական տարիքի սաներին մասնակից դարձնելով տարբեր ծեսերին և ծիսական արարողություններին և ընդգրկելով գործունեության տարբեր ձևերում, նպաստում ենք նրա զարգացման տարբեր ոլորտների խթանմանը: Ծեսերի կազմակերպման ժամանակ երեխան իր գործունեության ժամանակ բոլոր տեսակներին զուգահեռ շփվում, հաղորդակցվում է իր հասակակիցների կամ մեծահասակների հետ խոսում է, պատմում, թե ինչ է անում, կարծիք է հայտնում, նկարագրում, հարց տալիս ու պատասխանում հարցերին: Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների հիմքում ընկած է այն համոզմունքը, որ երեխաների զարգացումը բազմակողմանի է, քանի որ ազգային ոգով զարգացմանը զուգընթաց զարգանում է երեխայի խոսքը և լեզուն, զգացմունքները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ռիմա Ռստկյան, Հայկական ծեսեր
2. Ա. Սարգսյան, Ազգային տոներ
3. Հ. Խառատյան, Հայ ժողովրդական տոները
4. Ռ. Հարոյան, Զատիկ
5. Ն. Մովսիսյան, Տոնացույց
6. Դոնարա Մարտիրոսյան, Հայոց տոներ